


3832.

Պրոլետարիատ բուլոր թիվ կազմութիւն, միացե՛ք

թիվ

ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ  
ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ  
16-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԸ

Ընկ. Վ. ՄՈԼՈՏՈՎԻ ԶԵԿՈՒՅՈՒՄԸ ՄՈՍԿՎԱՅԻ  
ԿՈՐԴՐՈՒ ԴՈՑԵՄԲԵՐԻ 6-Ի ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՊԼԵՆԱՐՈՒՄ



ԿՈՒՍԱԿՑԱԿՑՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Տ Ե Ր Ե Կ Ա Յ 1933



04 JUL 2013

24 JAN 2006

38  
= 86

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԹԵՐԿՈՒ  
ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ

Ընկերներ, այս տարվա սկզբին մենք ամփոփեցինք առաջին հնգամյակի արդյունքները։ Այդ արդյունքների մեջ արտացոլվեցին սոցիալիզմի վիթխարի աճումը Խորհրդային Միության մեջ, ԽՍՀՄ-ի ներքին ու միջազգային դիրքերի հսկայական ամրացումը Հոկտեմբերյան հեղափոխության առաջին տասներենգամյակում։ Միևնույն ժամանակ այդ արդյունքները ջնջեցին բուրժուական բանակին պատկանող՝ Հոկտեմբերյան հեղափոխության թշնամիների շատ ուշադրությունները, վորոնք նախագուշակել ենին հնգամյակի և նրա հետ միասին խորհրդային իշխանության տապալումը։

Ընկ. Ստալինի առաջին հնգամյակի արդյունքներին վերաբերյալ այն հայտնի զեկուցման համար, վորոն իր վրա բեենց վոչ միայն մեր յերկրի աշխատավարների, այլև Հոկտեմբերյան հեղափոխության մեր սահմաններից դուրս գտնվող բազմաթիվին բարեկամների ուշագրությունը, լավագույն լուսաբանությունն են անդիսանում Պետալանի այս տարի գարնանը լույս ընծայած գիրքը «ԽՍՀՄ-ի ժողովրդական տնտեսության



1780 - 91

17 908

զարգացման առաջին հնդամյա պլանի արդյունքները՝  
վերնագրով։ Այդ գիրքը, վորը փաստերի ու թվերի  
հսկայական քանակությամբ լուսաբանում է Հոկտեմբ-  
րնյան հետափոխության հաղթական ուղին, պետք է  
ուսումնասիրել վորպես համաշխարհային նշանակու-  
թյուն ունեցող փաստաթուղթ։ Այդ առանձնապես  
պետք է խորհուրդ տալ ուսանող յերիտասարդու-  
թյանը։

Մի տարի ել չի անցել այն որից, յերբ մենք ամ-  
փոփեցինք 1-ին հնդամյակի արդյունքները։ Այժմ,  
Հոկտեմբերյան հեղափոխության 17-րդ տարվա շեմ-  
քին, մենք կարող ենք ասել վոր սոցիալիստական հե-  
ղափոխության անցյալ տարին ԽՍՀՄ-ում հանդիսա-  
նում է նրա ուժերի հնտապա հսկայական աճման տա-  
րին, բանվոր դասակարգի նոր հաջողությունների տա-  
րին։

Մի տարի ևս անցավ այն որից, յերբ մեր յերկրի  
աշխատավորների բոլոր ուժերը կենտրոնացվեցին սո-  
ցիալիստական տնտեսությունն ու կուլտուրան բարձ-  
րացնելու ներքին խնդիրների վրա։ Այս տարվա շի-  
նարարության պլանը ավելի, քան առաջ, արտացոլեց  
հսկայական ստեղծագործական այն աշխատանքի թա-  
փը, վորն իրականացվում է ԽՍՀՄ-ում։ Այս տարվա  
հարվածային շինարարությունների սոսկ ցուցակը  
բանեց թերթի համարյա մի ամբողջ եջը։ Զե վոր հար-  
վածային շինարարությունների մեջ ներդրված գու-  
մարները կազմում են շինարարության ծախսերի մի

քառորդից մի քիչ ավելի միայն։ Հոկտեմբերյան հե-  
ղափոխության անցյալ տարվա հաջողությունների մա-  
սին խօսում են այնպիսի փաստեր, ինչպիսիք են նոր,  
խոշորագույն արդյունաբերական ձեռնարկություննե-  
րի շահագործման հանձնվելը։ Դրանց թվին են պատկա-  
նում թթվուռակերպ տրակտորների Զելյարինսկի գոր-  
ծարանը, խոշոր մեքենաշինության Ուրալի գոր-  
ծարանը, մեծ շոգեքարշերի գործարանը Լուգանսկում,  
գնդակավոր տունցքականների հսկայական գործարա-  
նի շինարարության ավարտումը Մոսկվայում, Բոր-  
բիկի խոշորագույն քիմիական կոմբինատուի առաջին  
հերթի շինարարության ափարտումը, Անդրկովկասում  
ամենախոշոր ելեկտրոկայանի՝ Ռինդգետի կառուցումը  
և ուրիշ շատ խոշոր արդյունաբերական ձեռնարկու-  
թյուններ։ Ասացեք, վրատեղ, աշխարհիս վայր յերկրում  
են կառուցվում այժմ այդպիսի գործարաններ, այդ-  
պիսի ձեռնարկություններ։ Գտեք յերկրագնդի քար-  
տեղի վրա այնպիսի յերկր, վարտեղ կարելի լինի  
մատնանշել, թե անցյալ տարի նման ձեռնարկություն-  
ներ են կառուցվել արդյունաբերական նոր շինարա-  
րության ասպարեզում։

Դրա հետ միասին մենք նոր քայլ արինք գյուղում՝  
կոլտնաեսությունների ու խորհունաեսությունների աճ-  
ման ու ամրացման գործում։ Վոչ վոք չի կարող ժըխ-  
տել, վոր Խորհուրդների յերկրի գյուղատնաեսությունը  
հաստատակե թեակոփել ե արագ վերելքի շրջանը։

Հակասակ լուլոր և ամեն տեսակ դժվարություննե-

բին՝ մեր զարգացման ընդհանուր զիծը ներկայացնում է անեղի վերելիքի զիծ, կուլտուրայի նվոր անման զիծ, և ԱՀՄ-ում սոցիալիզմի վիրտուոսի ամրացման զիծ: Առաջին հնդամյակի հաջողություններից մենք անցանք յերկրորդ հնդամյակի խնդիրներին, սոցիալիստական անդասակարգ հասարակություն կառուցելու ինդիրներին և հաջողությամբ առաջ ենք գնում այդ ուղիղով: Սոցիալիզմի հաղթանակի համար մեր մղած պայքարն անխօնելիորեն կապված է յեղել խորհրդային իշխանության կիրառած խաղաղության քաղաքականության հետ և Խորհրդային Միության բազմաթիվ ազգությունների յիդայրական գործակցության հետ, սոցիալիստական կուլտուրայի զարգացման հետ՝ նրանց բազմապիսի աղջային ձեռքով և միենալոյն ժամանակ և ԱՀՄ-ի և ամբողջ աշխարհի ժողովուրդների միջազգային կապերի ամրացման հետ:

Հակառակ գծով է ընթացել կապիտալիստական յերկրների զարգացումը: Անա չորս տարի յե, վորտնտեսական ճգնաժամն անդադար քայլայում և կապիտալիստական պետությունները, չնայած վոր բուրժուազիայի հասավարող խմբակները զանազան փորձեր են անում աշխուժացնելու արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունը: Մինչև այժմ կապիտալիզմը չի կարողանում դուրս սողալ այն փոսից, վորի մեջ ընկել ենա վերջին տարիներու: Դորժագրկությունը և բանվորների ու գյուղացիների սովը շարունակում են ավելանալ: Կապիտալիզմի յերկրներում կու-

տակվում են հեղափոխության պայթուցիկ ուժերը, չնայած բուրժուազիան ամեն ջանք գործ է դնում դրանք արմատին անելու համար:

Կապիտալիստական յերկրի տիրապեսով զասակարգերի քաղաքականության մեջ ուժեղացան ծայրահեղ հետազիմական ուժերը, ֆաշիստական ուժերը: Նրանք զարգացնում են բուրժուազիան սեակցիայի ուժերը, հրահրում են նացիսնալիզմի, մանավանդ հակածիւականության խավար կրքերը: Ինչով ել քողարկվի բուրժուազիան նեխված նացիսնալիզմի այդ քաղաքականությունը, վերջինիրդո նրա իմաստը թափնված ե բուրժուազիայի հարածուն յերկուզի մեջ իր գոյության համար, «թող փախչի ով կարող ե» քաղաքականության յուրահատուկ ձևով: Սոցիալ-գեմոկրատիայի կրախն ու Յերկրորդ ինտերնացիոնալի քայլայումը միայն ընդգծում են տեղի ունեցող անցքերի իմաստը, յերբ բուրժուազիան կոմունիզմի գեմ իր մղած պայքարում ավելի ու ավելի յե գերադասում ամենածայրահեղ միջոցները, գերազանցում և սեակցիոն ուժերի ուղղակի բռնության մեթոդները բանվոր զասակարգի նկատմամբ, հեղափոխական տարրերի նկատմամբ:

Կոմունիզմի հանգեց, նրա հարածուն ուժերի հանգեց կենդանական անով և լցված այդ բուրժուազիան սեակցիոն ուժերի քաղաքականությունը, վորոնք արդեն մոռեցել են կամ մոտենում են իշխանությանը կապիտալիստական յերկրներում: Այդ քաղաքականության բնորոշ գիծն ե դառնում հույսը կապել պատե-

բաղմի հետ վորովս մի յելք այն փակուզուց վորին հասցրին ճգնաժամ ու տնտեսության քայլքայումը կապիտալիստական յերկրներում: Բուրժուազիայի շարքերում ավելի ու ավելի յե աճում անվտանությունը ճգնաժամից դուրս գալու ներքին ռողիներ գտնելու հնարավորության միջ, ինչպիս և նրանում, թե հնարավոր և հաղթահարել մի կողմից ներքին հարածուն այն հակասությունները, վորոնք գոյություն ունեն կապիտալիստաների ու շահագործողների բանակի և մյուս կողմից բանվորների ու աշխատավորների բանակի միջև: Գնալով տիրապետող բաւրժուական ուժերի հիմնական գիծն և դառնում ավելի յեվ ավելի կողմնութեավի դեպի պատերազմը: Այժմ կապիտալիստական զիւավոր յերկրներում ծավալվող սպառազինութիւնի մրցությունը վկայում է, վոր ավելի ու ավելի յեն մոռնում իմարիտալիստական պատերազմները, ուժեղանում և ԽՍՀՄ-ի վրա հարձակում գործելու վանդը: Ազգերի լիգայի քայլքայումը, զինաթափման կոնֆերանսի անդառությունը շեշտում են այն փառաք, վոր իմարիտալիզմի բանակում իշխանության զլուխն են բարձրանում այն ուժերը, վորոնք իրենց հույսը զբել են պատերազմի, վորաքս կապիտալիստական ամրազմականի առաջած ամենախորը ճգնաժամից դուրս գտաւ յելքի վրա:

Այդ բոլորը շեշտում ե մի կողմից Խորհրդագյիւն Միության և մյուս կողմից կապիտալիստական աշխարհի զարգացման ներհակությունը

Հոկտեմբերյան հեղափոխության 16-րդ տարեդարձն մենք ավելի քան յերեկիցե կարող ենք ասել, վոր ուժերի փոխհարաբերության մեջ գնալով ավելի ու ավելի մեծ տեղաշարժ և կատարվում հոգուտ սուցիալզմի, ընդգեմ կապիտալիզմի:

Մեր հաջողությունները ձեռք ենք բերում մենք լարված պայքար մղելով զասակարգայնորեն թշնամի ուժերի գերակայությունը նարկադրված ենք նկատի առնել, թե ինչպիս կուլակության և քաղաքի բուրժուական զասակարգերի մնացորդները փոխում են իրենց գործելակերպը, չեն դադարում քար նետել մեր վոտքի տակ: Հոկտեմբերյան հեղափոխության վերջին տարին կրկին ցույց տվեց, վոր մեր յերկրի բանվոր զասակարգն ընթանալով լինինյան կուսակցության զեկավարությամբ, անսպառ ուժով և լցված բոլոր և ամեն տեսակ դժվարութունները հաղթահարելու համար:

Հացի հարցը միշտ կարևորագույն հարցն և յեղել Խորհրդային պետության համար: Մթերման առաջվատիսկից պարտազիբ կերպով հացահատիկ հանձննելու մեթոդին անցնելուց և մի շարք այլ ձեռնարկումներ կերպուելուց հետո մենք կարողացանք սահեղծել այնպիսի դրություն, վոր այս տարի հացի հարցում մենք զգալիորեն ավելի լավ կապահովենք մեր կարիքները, քան անցյալ տարի: Բանվորներին ապրանք և մթերք մատակարարելու հարցը, յերբ հոկտեմբերյան չափով աշել և մեր արդյունարերդությունը, միշտ հանդիսացել

ե կուսակցության վճռական խնդիրներից մեկը: Մատակարարման նոր սխստեմին անցնելով, շատ ձեռնարկություններում բանմատակարարման բաժիններ կազմակերպելով մենք կարողացանք այս տարի զգալի չափով բարելավել գործը: Անվիճելի յէ, վոր մենք կարող ենք այսուհետեւ ևս արագործն բարելավել այդ գործը: Առանձնապես մեծ նշանակություն ունեցավ այն փաստը, վոր գյուղատնտեսության ասպարեզում գործադրված մի շարք կազմակերպական միջոցներով, նախ և առաջ քաղբաժիններ կազմակերպելով ՄՏԿ-ներում ու խորհունտեսություններում, մենք զգալիորեն բարելավեցինք կոլտնտեսական շարժման և խորհունտեսությունների զեկավարումը: Այդ նոր մեթոդներում, կազմակերպական նոր ձեռնարկումներում մենք տեսնում ենք նոր, համոզիչ ապացույցներ, վորոնք հաստատում են պրոետարական հեղափոխության անձման անսպառ հնարավորությունները, հաստատում են սոցիալիզմի կառուցման զեկավարման այն մեծ արվեստը, վորը ցուցաբերում և կուսակցությունը:

## 2. ՆՈՐ Ա.ԲՏԱ.ԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԵՎ ՆՈՐ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՑՈՒՐԱՅՈՒՄԸ ԳԼԽԱՎՈՐ ԽՆԴԻՐՆ Ե

Ինչում ե կայանում այժմ մեր զլիալոր խնդիրը: Կուսակցությունը սպառիչ պարզուցությամբ պատասխան տվեց այդ հարցին: Այդ պատասխանը ձևակերպեց ընկ: Ստալինը կենտկոմի ու կվչի հունվարի պլենում հետեւալ խոսքերով, «Առաջին հազարյակի

շրջանում մենք կարողացանք կազմակերպել նոր շինարարության խանդավառությունն ու պաֆուր և վըճռական հաջողություններ ձեռք բերինք: Այդ չափ է: Սակայն այժմ դա քիչ է: Այժմ այդ գործը մենք պետք ե լրացնենք նոր գործարանները, նոր տեխնիկան յուրացնելու պաֆուով, լրջորեն բարձրացնելով աշխատանքի արագութականությունը, լրջորեն կրծատելով ինքնարժեքը: Այդ ե այժմ զլիսավորը»:

Այդ ցուցումների հիման վրա կուսակցությունը կարողացավ այժմ համախմբվել բանվոր գասակարգի լավագույն տարրերին և պայքար ե մզում դրանք գործականորեն իրականացնելու համար: Նույն հիմքի վրա տեղի յե ունենում շարքային կոլտնտեսականների և խորհունտեսական բանվորների ուժերի մորիլից պացիան:

Հոկտեմբերյան հեղափոխության 16 տարվա ընթացքում մենք կառուցցինք հսկայական թվով նոր գործարաններ: Նրանց թիվն որեցոր ավելանում ե: Նրանց մեջ աշխատում են հսկայական թվով նոր բանվորներ ու ծառայողներ: Զի կարելի մոռանալ, վոր առաջին հնգամյակի ընթացքում մեր արդյունաբերության մեջ աշխատող մարդկանց թիվը կրկնապատկվեց: Հանգես յեկան նորանոր շատ անտեսական զեկավարներ: Տեխնիկական զեկավարմանը մոռեցան տասնյակ՝ հազարավոր յերիտասարդ մասնագետները: Այդ պայմաններում դժվար չե հանկանալ, թե ինչպիսի նշանակություն ունի այժմնոր ձեռնարկությունները,

նոր տեխնիկան յուրացնելու խնդիրը։ Յեթե անցյալ  
տարի արդյունաբերության արտազգանքի աճումը մի  
քիչ պակաս էր, քան նախորդ տարիներում, ապա դրա  
զվարվոր պատճառն է այն, վոր գործը դեմ առավ  
հատկապես յուրացման հարցին, վոր մենք հետ ենք  
մնում այդ գործում։ Մեզ մոտ հին գործարաններն  
զգալիորեն ավելի յեն բեռնավորված, քան մինչեւ  
զափոխական շրջանում։ Նրանցից շատերն աշխատում  
են յերկու և ավելի հերթափոխությամբ։ Հին և նոր  
ձեռնարկությունները պատվերների պակասություն  
չունեն։ Բանը միայն այն է, վոր մենք ինչպես հար-  
կըն և ողտագործենք մեր արամագրության տակ  
կդանվող արտազրական հարածուն բոլոր հնարավորու-  
թյունները։ Այն ժամանակ մենք զգալի չափով կրարձ-  
րացնենք արդյունաբերության արտադրանքի տարե-  
կան աճը, նրա վրակը, այն ժամանակ մենք իսկա-  
պիս կրարձրացնենք բանվորների աշխատանքի ար-  
տադրականությունը, լրջորեն կիշեցնենք ինքնար-  
ժեքը։ Դրա վրա յե կենարոնացված այժմ կուսակցու-  
թյան ու կառավարության զվարվոր ուշադրությունը։  
Նոր ձեռնարկությունները, նոր տեխնիկան յուրաց-  
նելու պայքարը լուրջ պահանջներ և առաջադրում  
թե տնտեսական-տեխնիկական զեկավարներին և թե  
բանվորներին ու բանվորութիւններին։ Նա պահանջում է  
ավելի լավ կազմակերպել աշխատանքը և համապա-  
տասխանորեն բաշխել տնտեսական կազրերը։ Նա չի  
հաշավում ձեռնարկությունների ու ցեխերի պլանա-

դրկության հետ, տեխնիկական հրահանգման ան-  
փութության հետ, պարագարդների հետ։ Նա չի  
հաշավում տնտեսական ու տեխնիկական զեկավարու-  
թյան անհեռատեսության ու հետամնոցության հետ։  
Միևնույն ժամանակ նա պահանջում է ամրակուռ աշ-  
խատանքային կարգապահություն, պահանջում է  
խնամքով վերաբերվել բանուժի ծախսմանը, ակտիվու-  
թյուն ցուցաբերել մրցության ու հարվածայնության  
զարգացման գործում, առավելագույն չափով բարձ-  
րացնել բանվորների ու վարպետների տեխնիկական  
գիտելիքները։ Նա թե բանվորներից և թե տնտեսա-  
կան ու տեխնիկական զեկավարներից պահանջում է  
բարձրացնել կուլտուրականությունը։ Վոր մենք եյա-  
կան հաջողություններ ենք ձեռք բերում նոր  
տեխնիկան յուրացնելու գործում, կարելի յե ցույց  
տալ որինակներով։ Բավական է, յեթե հիշենք, թե  
ինչպես ե ընթացել տրակտորաշինության տեխնիկա-  
յի յուրացումը մեր գործարաններում։ Հայտնի յե, թե  
ինչպիսի գժվարությամբ կարգի բերվելց արտադրու-  
թյունը առաջին տարում Ստալինգրադի արակարային  
զարձարանում։ Խարկովի արակարային գործարանն  
ոգտագործելով նրա փորձը՝ միքանի ամսում վոտի  
կանգնեց։ Ինչպես հայտնի յե, այժմ այդ յեր-  
կու գործարաններն եւ լրիվ հասկել են իրենց համար  
նախագծված արտադրական կարողությանը։ Ավելի  
մեծ գժվարությունների պետք է հանդիպեր թրթուսա-  
կերպ արակարությունների արտադրության կարգավորումը

Չելյարինսկի գործ արանում: Տրակտորաշինության փորձը կուտակելուց հետո այսուղի ընդհանուր առմամբ հաջող ե ընթանում տեխնիկայի յուրացումը, գործառնը կատարում ե իր համար սահմանված արտադրական առաջարանքները: Զավիազանց ընորոշ ե Մագնիսոգորսկի հալոցների որինակը, վորոնք վերաբերում են աշխարհիս խոշորագույն հալոցներին և առաջ յերեք չեն կառուցվել մեր յերկրում (յուրաքանչյուր հալոցի նախագծված կարողությունը կազմում է որական 1070 տոնն): Այդ գործարանի առաջին հալոցն սկսեց աշխատել անցյալ տարվա սկզբներին: Յերկրորդ հալոցը՝ անցյալ տարվա կեսերին: Յերկրորդ հալոցը գործարկվելուց մի տարի հետո, ընթացիկ տարվա կեսերին, սկսեց աշխատել Մագնիսոգորսկի յերրորդ հալոցը: Այդ բոլոր հալոցներն ունեն հավասար կարողություն, բայց տալիս են արտադրական տարրեր արդյունքներ: Առաջին հալոցը, վորից սկըսվեց հալոցային նոր արտադրության իրացումը, ամենից շատ դժվարություններ ապրեց: Յեզ դեռ վոչ մի ամիս չեր կարողանում տալ 800 տոննի հասնող որական միջին արտադրանք: Յերկրորդ հալոցը վերջին ամիսների ընթացքում միքանի անգամ հասել ե միջին հաշվով որական 800 տոնն և ավելի արտադրանքի: Միայն յերրորդ հալոցը, վորտեղ ողագործվեցին առաջին յերկու հալոցի գասերը, ցույց ե տալիս, թե ինչ է նշանակում յուրացնել գործի նոր տեխնիկան: Այդ հալոցը սեպտեմբերին որտեղուն միջին հաշ-

վով տալիս եր մոտ 1010 տոնն արտադրանք, և նոր տեխնիկին արգեն հասավ որական միջին մոտ 1200 տոնն արտադրանքի: Այդպիսով յերրորդ հալոցում, վորը աշխատում է ընդամենը 5 ամիս, վերջին յերկու ամսում (սեպտեմբերին և հոկտեմբերին) հաշողվեց ստանալ որական միջին հաշվով այնքան արտադրանք, վորը նույնիսկ գերազանցում է նախագծված կարողությունից: Դա մեծ հաջողություն է տնտեսական և տեխնիկական զեկավարության համար, Մագնիսոգորսկի ընկերների համար:

Այդ որինակն առանձնապես շեշտում է, թե ինչ նշանակություն ունի նոր ձեռնարկությունները յուրացնելու համար պայքարելը, նոր սարքավորումը, նոր տեխնիկան յուրացնելու համար պայքարելը: Վերջին տարիներս կառուցված հսկայական թվով նոր ձեռնարկությունները կարող են և պետք ե տան անչափ ավելի արտադրանք, քան տալիս են այժմ: Ամեն ինչ կախված է այն համառությունից, կազմակերպված ությունից ու գիտակցությունից, վոր կցուցաբերենք մենք այդ նոր ձեռնարկությունները յուրացնելու համար մզվող պայքարում: Վերջին տարիներս տեխնիկապես վերակառուցվեցին վոչ միայն առանձին ձեռնարկություններ, այլև արդյունաբերության ամբողջ ճյուղեր: Լավագույն որինակ կարող ե հանդիսանալ Դոնքասի և մյուս շրջանների ածխարժունարկությունը: Հենց այդ արդյունաբերության տեխնիկական վերադիմումն է, վոր նոր, ավելի լուրջ

պահանջներ և ներկայացնում անտեսական ու աելքակիկան զեկավարներին: Այդ են ասում առանձնապես ուժգին կերպով ԽՍՀ Միության Ժողկոմիսորնի և Համկ (բ) կ-ի Կենտրոնական Կոմիտեյի հայտնի վորոշումը Դոնբասի մասին, ապա ԽՍՀՄ-ի Ժողկոմիսորնի և Համկ (բ) կ-ի Կենտկոմի վոլոշումը յերկաթուղային տրանսպորտիմասին:

Այդ վորոշումներում կուսակցությունը և կ սոսավարությունը անողոք քննադատության յենթարկեցին մեր տնտեսության խոշորագույն ճյուղերի անտեսական ու տեխնիկական զեկավարության թերությունները: Դրանց մեջ ուժգին հարգած և հասցվում արևտեսական կտուավարման դրասենեկային-բյուրոկրատիկ մեթոդներին: Կուսակցությունը և կառավարությունը ամենայն վճռականությամբ պահանջեցին կըրանաւել կտուավարման ռուճացած ապարատները՝ դրասենյակի լավագույն տեխնիկական ուժերը փոխազբել գեղպի արտադրություն, վերակառուցել բանվորների աշխատավարձը, ավելի մեծ ուշադրություն նվիրել ամենավորակյալ բանվորներին ու հարվածայիններին, վճռական հականարված տալով ոպորտունիտական ինքնառուին, արտադրական առաջազրանքների «անիրական» լինելուն վերաբերյալ շաղակրատությանը:

Այդ վորոշումների համաձայն հսկայական աշխատանք կտուարվեց Դոնբասի և ածխային մյուս շրջանների ածխարդյունաբերության, ինչպես և յերկաթու-

վային արանսպորտի կառավարումը վերակառուցելու ասպարեզում:

Զի կարելի ասել վոր այդ աշխատանքն արդեն կատարված ե մինչև կերջը: Ըսդհակառակը, անհրաժեշտ և համառ պայքար՝ հաղթահարելու սարուաժը այդ վորոշումների կիրառման գործում, վորը հանդես է բերվում բոլոր և ամեն տեսակի բյուրոկրատական ելեմենտների կողմից թե տեղերում և թե կենտրոնական որգաններում:

Բայց արդեն հիմա մենք կարող ենք խոսել ցուցանշված վորոշումների իրագործման առաջին արդյունքների մասին ածխային արդյունաբերության նկատմամբ:

Ցեմեն ընթացիկ տարվա առաջին յեսամսյակում Դոնբասը տվեց ավելի քիչ ածուխ, քան անյցյալ տարվա համալիւասիսն յեսամսյակում, ալլա վերջին ամսում նկատելի չափով փոխվեց Դոնբասի զրությունը: Տեխնիկական ուժերի փոխազրումը հանգարերը, բանութիւնության դեմ մղվող պայքարը, անողոք մերկացումն քաղաքական այն տասանումների, վորոնք ցուցաբերում եյին տնտեսական, արհմիութենական և կուսակցական որգանների զեկավարները հիշյալ վորոշումների կենսագործման ասպարեզում, արդեն ավին իրենց արդյունքները: Մենք գեռ չկարողացանք կատարել Դոնբասի արտադրական պլանը, սակայն համեմատած անցյալ տարվա հետ, վերջին ամիսներին ածխի հանույթը բարձրացավ՝ 30—35 տոկոսով: Այդ

(1039253)

ՀԱՅՐԱՎԵՐ ՀԱՅՐԱՎԵՐ ՀԱՅՐԱՎԵՐ ՀԱՅՐԱՎԵՐ

4780-91

արդեն մեծ հաջողություն է կարևոր և մատնահնչելը  
վոր մի շաբթ նույնատեսակ կազմակերպական միու-  
ցառումների և մասսաների մեջ քաղաքական աշխա-  
տանքի իրագործմամբ նաև մյուս տծիսային շրջան-  
ներում՝ Ռւբալում, Մոսկվայի ավագանում, Կուզնեց-  
կի շրջանում, նույնպես զգալի չափով բարեկավեց  
ածիքի արտադրական առաջադրանքների կատարումը:

Զգալիորեն վատ և գործը յերկաթուղային տրանս-  
պօրտում: Այստեղ արգեն կազմակերպված քաղաքա-  
ժինները պետք ե մեծ դեր խաղան տնտեսական աշ-  
խատանքի բարելայման գործում: Այդ և այժմ կու-  
սակցության ու կառավարության ամենաանհետաձգելի  
խնդիրներից մեկը:

Կուսակցության ու կառավարության վերոհիշյալ  
գործումներում շոշափված են մեր արդյունաբերու-  
թյան բոլոր ցյուղերին, մեր տնտեսական բոլոր կազ-  
մակերպություններին վերաբերող կարեւրագույն հար-  
ցեր: Վոչ մի տարակույս չի կարող լինել, վոր կա-  
սակարման գրասենեկային-բյուրոկրատիկ մեթոդնե-  
րի գեմ պայքարելը պետք ե դառնա մեր բոլոր որ-  
գանների ուշադրության կենտրոնը, վոր բյուրոկրա-  
տիկ խեղաթյուրումները հաղթահարելու հաջողություն-  
ներից են կախված այժմ հսկայական չափով նոր ձեռ-  
նարկությունները, նոր տեխնիկան յուրացնելու հա-  
ջողությունները: Այդ վորշումներում անողոք քննա-  
դասության են յենթարկվում տնտեսական կառավար-  
ման գրասենեկային-բյուրոկրատիկ մեթոդները և

միևնույն ժամանակ նրանց մեջ արտահայտված ե  
այն ամենախորը համոզմունքը, թե մենք վոչ միայն  
պեսք ե ավելի լավ աշխատե՞ք, այլև կարող ենք  
ավելի լավ աշխատել, կարող ենք ավելի առաջ զնալ,  
տնտեսական վերելքի ճանապարհով, անողոքարար  
պայքար մղելով զեկավարման մեթոդները բարե-  
լավելու համար և այդ հիման վրա տնտեսական  
զեկավար կազմերը թարմացնելու համար: Դրա  
հետ միասին այդ վորշումներում վստահություն է  
արտահայտված կոմունիստ տնտեսավարների հարա-  
ծուն ուժերին, աշխատանքը նոր հիմքերի վրա դնե-  
լու նրանց ընդունակությանը, համոզմունք ե արտա-  
հայտված, վոր այժմ քիչ չեն անկռւսակցական այն-  
պիսի մասնագետներ, վորոնք ընդունակ են ինչպես  
հարկն ե իրականացնել խորհրդային քաղաքականու-  
թյունը կուսակցության ղեղակավարությամբ: Այդ  
բոլորը վկայում ե, վոր կուսակցության ու կառավա-  
րության վերոհիշյալ վորշումները հսկայական նշա-  
նակություն կունենան գլխավոր խնդիրը՝ նոր ձեռ-  
նարկությունները, նոր տեխնիկան յուրացնելու խըն-  
դիրն իրականացնելու համար:

### 3. ՍՈՑԻԱԼՀՅՄԻ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՅԱԿԱՆ Ո Ե Զ Ե Բ Վ Ն Ե Ր Ը

Անցյալ տարին հատուկ նշանակություն ունեցավ  
մեր կուտնատեսական շարժման համար: Կուտակության

փորձերը՝ ողտագործել կոլանահսությունները՝ նրանց միջոցով, նոր ձեերով խորհրդային իշխանության բևա պայքարելու համար, ուոր կերպով զրին կոլտնտեսությունները խորհրդային իշխանության վստահելի հետարանը գարձնելու հարցը, զրանք բոլշեիկյան կու անոնեսություններ զարձնելու հարցը:

Այս տարի բոլոր ցանքերի ավելի քան չորս հինգ երրորդ մասը պատկանում է կոլտնտեսություններին ու խորհնանակառություններին: Գյուղացիության գերակառող մասաւան աշխատում եր կոլտնտեսական գաշտերում և, վոր առանձնապես կարեոր և, կոլտնտեսությունները կայուն գարձան, ամրացան: Գաղաքացին կոլտնտեսություններից գուրս գալու խոսակցությունները, այդպիսի դեպքերը բացառություն են զարձել: Ընդհակառակը, ուժիդացավ մենաւանահների հոսանքը գեպի կոլտնտեսությունները:

Գյուղում հագթանակեցին կոլտնտեսական կարգերը: Սակայն հակախորհրդային ուժերն ամենին վարչեն զինքնիքը, չեն զաղաքեցրել իրենց քայլքայիշ աշխատանքը կոլտնտեսություններում: Կուլտկությունը բազմաթիվ փորձեր և արել և զետ անում և նոր պայմաններին հարմարվելու և ողտագործելու կոլտնտեսական ձեերը՝ խորհրդային իշխանության դեմ պայքարելու համար: Դրան մենք պետք են հակադրելներ միջոցառությունը: Այդ պայքարը կուլակի դեմ առանձնադրեն համառ մզգում կուլտկությունը կուլտկություններին կովկասությունը, վորական կուլտկությունը հաստատելու համար մզգուղ պայքարում, կապիտալիստների, կուլակների և կալվածատերերի իշխանությունը հաստատելու համար մզգուղ պայքարում:

Հըրդային կազմակերպությունների ղեկավարությունը շատ հետ եր մնում կոլտնտեսական շինարարության հակայական թափից, վորական այնուամենայնիվ կուլտկային սարստաժն ու հակահեղափոխական մխառարների քայլքայիշ աշխատանքը ջախջախվեց վճռական միջոցներով: Կուսակցությունը պետք է ամենասուր կերպով զնիր հարցը, վոր կոլտնտեսությունները խորհրդային իշխանության նկատմամբ չեն կարող չեղոք լինել, վոր նրանք պետք են լինեն կամ բոլցերի կյան կոլտնտեսություններ, վորոնք տանում են գյուղացիներին գեպի լավագույն կյանքը, կամ կուրակության գործիքը հին կարգերի վերականգնման համար մզգուղ պայքարում, կապիտալիստների, կուլակների և կալվածատերերի իշխանությունը հաստատելու համար մզգուղ պայքարում:

Այս տարիս սկզբին Մոռկայում տեղի ունեցած հարվածային կոլտնտեսականների համամիտութենական հավաքը բացառիկ ուժով ցույց տվեց, թե վորքան մեծ խանգամառություն և տիրում այժմ կոլտնտեսություններում կազմակերպված զյուղացիական մասսաներում: Համագումարն ակնառու կերպով ցույց տվեց, վոր կոլտնտեսային գործը զարձել և տասնյակ միլիոնավոր զյուղացիության գործը: Էնկ. Ստալինի առաջադրած ինցիդրը՝ առաջիկա յերկուշերեք տարում ունեոր զարձնել բոլոր կոլտնտեսականներին, ամենաշային արձագանք զտավ զյուղացիական մասսաներում: Այս տարիս մեր զյուղատնտեսական հիմնական կամ-

պահաներն ընթացան կոլտնտեսականների ունեոր կյանքի համար պայքարելու դրոշի տակ: Աւճեոր կոլտնտեսական կյանքի այն հեռանկարը, վորը բացվում է կոլտնտեսականների առաջ, նպաստեց մեր գյուղի աշխատանքի բարելավմանը, կոլտնտեսությունների ամրացմանը:

Դրա հետ միասին կուսակցությունն ամբողջ հասակով զրեց կոլտնտեսական շարժման կազմակերպակա՞մ հաւցերը, կոլտնտեսությունների նկատմամբ կուսակցության զեկավարության բարելավման խընդիրները: Այդ տեսակետից՝ վճռական դեր խաղաց քաղաքինների կազմակերպումը մեքենաւրակուրային կայաններում ու խորհանտեսություններում: Ավելի քան 15 հազար կոմունիստներ կուսակցությունը գործուղեց զյուղում աշխատանք կատարելու համար, առաջին հերթին կոլտնտեսությունները զեկավարելու համար: Գյուղը, հանձին քաղքամնի աշխատողների, ստացավ քաղաքական հոգուագույն ուժեր և հաջարավոր կուսակցական լավ կազմակերպիչներ, գորոնց այնքան մեծ կարիք ուներ զյուղը: Արդեն աշնանացանի կամպանիայի ժամանակ շատ շրջաններում ծավալվեց քաղքաժինների աշխատանքը: Այդ ժամանակիցից ի վեր կուսակցությունը շարունակում է ամրացնել քաղքաշինները կուսակցական ուժերով, ամեն կերպ աշխատանքում:

Այդ բոլոր ձեռնարկումների շնորհիվ նկատելի բեկում ստեղծվեց կոլտնտեսական շարժման տապարե-

գում: Զգալիորեն բարեկավվեց կոլտնտեսային աշխատանքին ցուցաբերված վերաբերմունքը կոլտնտեսականների զգալի մասի կողմից: Նկատելիորեն ամրացավ գիտցողիննան, աշխարերին ցուցաբերված արհամարհական վերաբերմունքը կոլտնտեսություններում փոխարինվեց ավելի շատ աշխարեր ստանալու ձգտումով, ուժեղացավ հանրային, կոլտնտեսական գույքի պահպանության համար պայքարն ընդգեմ հավատակիչների, լողբերի և ծույլերի, բարձրացավ կոլտնտեսական մասսաների կազմակերպվածությունը:

Այդ տեսնում ենք մենք ընթացիկ գյուղատնտեսական տարրվա արդյունքներից:

Այս տարի կոլտնտեսությունների մեծ մասում անցյալ տարվանից լավ անցան զյուղատնտեսական հիմնական կամպանիաները, նախ և առաջ ցանքը և բերքահավաքը: Այժմ պետական առաջադրանքների կատարումը նմանառես ավելի հաջող և ընթանում: Այդ յերեսում և նրանից, վոր ներկա պահին մարզերի ու յերկրների մեծամասնությունն արդեն ավարաել և կամ ավարտում է հացահատիկ հանձնելու պլանի կատարումը: Տվյալ պահին մենք առնվազն հարյուր միլիոն փութ ավելի հացահատիկ ենք մթերել, քան ամբողջ անցյալ տարին: Գետնախնձորի մթերումն այս տարի կրկնապատճել ավելի յե, քան անցյալ տարվա համապատասխան շրջանում: Յուղի մթերումը նույնպես գերազանցում է անցյալ տարվա համապատասխան մթերումից: Չնայած ճակնդեղացան շրջաններում կատար-

վող աշխատանքի զգալի թերություններին, այս տարի ձակնդեղի մթերումն անցյալ տարվանից ավելի տառջ և գնում: Բաժբակի մթերումը նույնպես ավելի աշխույժ ու արագ ե ընթանում, քան անցյալ տարի:

Դրա հետ միասին կոլտնտեսականներն իրենք միծ մասամբ զգալի չափով ավելի յեն ստանում ըստ աշխարհերի, քան մի տարի տառջ: Բավական և աչքի անցկացնել կոլտնտեսականների ու կոլտնտեսութիների այն բազմաթիվ դիմումները, վարոնք տպագրվում են կենտրոնական ու տեղական թերթերում, վորպեսզի տեսնենք կոլտնտեսությունների զգալի ամրացման, աշխատանքի արտադրականության բարձրացման, կոլտնտեսականների յեկամտի ավելացման բազմաթիվ որինակներ: Այժմ հազվագյուտ չեն այնպիսի կոլտնտեսություններ, վորտեղ չնորհիվ աշխատանքի ավելի լավ-կազմակերպման, կոլտնտեսականը մի աշխորի համար ստանում և ութիւ և ավելի կիրոգրամ հացահատիկ: Այժմ գնալով հաճախակի յեն պատահում այնպիսի կոլտնտեսություններ, վորտեղ լավ բերքի կոլտնտեսականների ազնիվ աշխատանքի չնորհիվ կոլտնտեսականին և կոլտնտեսություն մի աշխորի համար աըրգում և 14—16 կիլոգրամ և նույնիսկ ավելի շատ:

Չնայած մեր կոլտնտեսությունների միծ մասի կազմակերպման հնկայական թերություններին, վոր կոլտնտեսություններում գետ հաճախ կազում և աշխատանքային կարգապահությունը և պատշաճ հականարդած չի արվում հանրային սեփականությունը հափշ-

տակողներին, չնայած վոր կուլտակները դեռ դուրս չեն մղվել կոլտնտեսական բոլոր զիրքերից և հաճախ հըմբորեն թագյնում են իրենց զսասարար, հականեղափոխական աշխատանքը՝ կոլտնտեսությունները պաշտպանելու գիմակի տակ—այնուամենայնիվ կոլտնտեսություններն, իրենց հաղթանակի տուջին իսկ քայլից, հնարագոր դարձրին զգալիորեն բարելավել չքավորների, ինչպես և միջակների զգալի մասի կյանքը, բաց արին այժմ գյուղացիական ամբողջ մասսայի տառջ մի ձանապարհ, վորը մոտ և կոլտնտեսական ունեոր կյանքին: Ավելորդ և ասել, վոր յեթե ԽՍՀՄ-ն մինչև այժմ մնար մանր, անհատական գյուղացիական անտեսության տիրապետման սպայմաններում, մենք այժմ ի վիճակի չեցինք լինի արահովել պետության հիմնական պահանջները գյուղատնտեսության մթերքների նկատմամբ: Կոլտնտեսական կարգերի հաղթանակը գյուղում՝ ապահովեց կոլտնտեսականների կյանքի բարելավումը, ինչպես և տասնյակ միլիոնավոր գյուղացիների ակտիվ մասնակցությունը սոցիալիզմի կառուցմանը:

Բանվոր գտառակարգը, կոլտնտեսությունների հաղթանակով, ստացավ գյուղացիական ոեզերմաքը անմիջական սժանդակությունը սոցիալիզմի կառուցման վործում: Գյուղացիական այդ ոեզերմաքը մտան սոցիալիզմ կառուցողների բանակը և կուսակցության բոլշևիկյան դեկավարությամբ, բանվոր գտառակարգի հետ միասին կառուցում են սոցիալիզմը: Բանվոր դա-

սակարգի և գյուղացիության դաշինքի գաղափառն  
այժմ վերածվեց սոցիալիզմ կառուցող բանվորների և  
կոլտնտեսություններ կառուցող գյուղացիների դա-  
շինքի հարկածայնությունն ու մրցությունն աճում  
են կոլտնտեսություններում՝ գործարանների որինա-  
կով։ Առաջավոր կոլտնտեսականներից ու կոլտնտե-  
սուհիներից արգեն հրապարակ յեկան կոմունիզմի  
հազարավոր անձնուրաց մարտիկներ։

Կոլտնտեսությունների կազմակերպման ասպարե-  
զում կարևորագույն տեղ են բոնում մեքենատրակտո-  
րային կայանները։ Գյուղում քաշող ուժի զգալի թու-  
լացման պայմաններում տրակտորները, կոմբայններն  
ու ավտոմոբիլներն արգեն հսկայական աշխատանք են  
կատարում գյուղատնտեսության մեջ։ Չնայած գյու-  
ղատնտեսության այդ ամբողջ նոր տեխնիկայի ոգ-  
տագործման մեծ թերություններին, չնայած վոր  
մենք զեռ շատ գանդաղ ենք առաջ գնում այդ տեխն-  
իկայի յուրացման ճանապարհով, մեքենատրակտո-  
րային կայանները դարձել են այժմ գյուղատնտեսու-  
թյան վերելքի առաջնակարգ գործիքը։ ՄՏԿ-ների  
ցուցարերած ոգնության մեջ մենք գտանք կոռպերա-  
տիվ ձևերի (կոլտնտեսությունների) և պետական ձե-  
վերի այնպիսի գուղակցումը գյուղում, վորը հսկայա-  
կան չափով հեշտացնում է կոլտնտեսությունների  
դեկարտումը, կոլտնտեսությունները բոլշևիկյան կոլ-  
տնտեսություններ դարձնելու գործը։

Կոլտնտեսական կարգերի առավելությունները, վո-

րոնք նշանակում են կործանարար հողացրվածության  
և գյուղացիական անթիվ միջնակների վերացումը,  
վորոնք հնարավորություն են ստեղծում բարելավել  
եանքաշրջանները, լայն ոգտագործել ակստակավոր սեր-  
մացուն, վորոնք առաջին անգամ հնարավորություն  
են տալիս հսկայական չափով գործազրել ազգոպիտու-  
թյան նվաճումները, —արդեն անդրադարձան կոլտն-  
տեսական զարգացման առաջին աստիճանի վրա։ Այդ  
առավելությունները տարեցտարի ավելի ուժգին են  
զգացնել տալու իրենց։ ԽՍՀՄ-ի գյուղատնտեսության  
վերելքի համար բացվեցին այնպիսի նովաստավոր հե-  
ռուանկարներ, վորոնք յերբեք չեյին կարող գյուղություն  
ունենալ մասնավոր սեփականության տիրապետու-  
թյան պայմաններում։

Այն թերահավատությունը, վորը ցուցարելիվում եր  
գյուղացիական ուեզերմներին, վորպես բանվոր դաստ-  
կարգի մեծագույն դաշնակցին սոցիալիզմի համար  
մղվող պայքարում, հանդիսանում եր բոլոր և ամեն  
տեսակ ուղորտունիստների բնորոշ գիծը։ Այդ թերա-  
հավատությունը չեր կարող սնանկության չհասցնել  
ոպուրատնատնելին։ Այժմ մենք գործնականորեն  
տեսնում ենք, թե ինչպես սոցիալիզմի աճման հզոր  
պատվանդանը դարձան գյուղացիական ուեզերմները։  
Այդ ուեզերմները բոլշևիկորեն լուսավորման և կազ-  
մակերպելու մեր աշխատանքից, կոլտնտեսությունն-  
երը բոլշևիկյան կոլտնտեսություններ զարձնելու  
մեր հմառությունից և կախված վերածել գյուղացիա-

կան այդ ուեզեր վաերը մեծագույն մի ուժի՝ պյուղա-  
անտեսությունը բարձրացնելու, մեր յերկրում սոցիա-  
լիզմի աճումն ել ավելի արագացնելու համար:

#### 4. ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ԽԱՂԱԳՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՎ- ՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՎՏԱՆԳԸ

Պայքարելով նոր տեխնիկայի յուրացման համար,  
ամրացնելով կոլտնտեսային նոր կարգը, մենք անշե-  
ղորեն խաղաղության քաղաքականություն ենք վա-  
րում մյուս պետությունների հետ ունեցած մեր փոխ-  
հարաբերությունների մեջ: Բոլորին հայտնի յե, թե  
մեր Միությունն ինչպիսի համառ պայքար և մղում  
նորմալ հարաբերությունները վերականգնելու և բո-  
լոր պետությունների, առաջին հերթին մեզ սահմա-  
նակից պետությունների հետ բարի գրացիսկան  
փոխհարաբերություններ հաստատելու համար: Ար-  
տասահմանյան, բուրժուական բանակի մեր թշնամի-  
ները նույնիսկ մեկ անգամ չե, վոր ստիպված են  
յեղել խոստովանել այդ խաղաղության քաղաքական-  
ության հաստատակամությունն ու նրա ձեռք բերած  
հաջողությունները: Միմյանց վրա չհարձակվելու պայ-  
մանագրերի, ինչպես և ազրեսորի (նախահարձակ  
կողմի) վրոշման պայմանագրերի կնքման գործում,  
ինչպես հայտնի յե, ԽՍՀ Միության կոստավարու-  
թյանն և պատկանում պատվագոր նախաձեռնու-  
թյունը: Խորհրդային իշխանության այդ յիշութ-

ների դրական նշանակությունը — յիշութներ, վո-  
րոնք նպատակ ունեն ամրացնել ընդհանուր խաղա-  
ղությունը — անվիճելի յի:

Սոցիալիստական շինարարության հաջողություն-  
ները, խաղաղության քաղաքականության հաստա-  
տում կիրառումն արտաքին հարաբերությունների  
տապարեզում՝ մեծապես նպաստեցին Խորհրդային Մի-  
ության միջազգային դիրքերի ամրապնդմանը: Ներ-  
կայում մենք նոր պակցույցներ ունենք միջազգա-  
յին հարաբերությունների մեջ ԽՍՀ Միության ունե-  
ցած տեսակարար կշռի աճումն ընդունելու ասպարե-  
զում: Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգների  
նախագահի նախաձեռնությունը ԽՍՀ Միության  
ներկայացուցչին Ամերիկա հրավիրելու գործում՝ այդ  
տեսակետից հատուկ հիշատակության և արժանի: Այդ  
նախաձեռնությունն անտարակույս կարող և դրական  
նշանակություն ունենալ յերկու յերկրների շահերի  
տեսակետից:

Մեր գիրքն այդ հարցում՝ ձևակերպված և ընկ.  
Կալինինի հայտնի նամակում: Այդ նամակի մեջ աս-  
ված և «Կասկածից վեր և, վոր զժվարությունները,  
յեթե այլպիսիք կամ կամ կարող են առաջ գալ յեր-  
կու ժողովուրդների միջև, կարող են լուծվել նրանց  
միջև անմիջական փոխհարաբերություններ լինելու  
դեղքում միայն, մյուս կողմից՝ վոչ մի յերաշխիք  
չկա, վոր նրանք կարող են լուծվել այլպիսի հարաբե-  
րությունների բացակայության դեպքում»: Այս խոս-  
ությունների բացակայության դեպքում:

քերի մեջ վորոշակիորեն արտահայտված է այն հայունի քաղաքականությունը, վոր մեր կառավարության կողմից կիրառվում և մյուս յերկրների հետ ունեցած փոխարարելությունների ասպարեզում: Ինձ մնում է միայն իմ համոզունքն արտահայտել, վոր ընկ. Լիտվինովի հանդիպումը պարոն Ռուզվելտի հետ՝ բեղմավոր արդյունքներ կտա ինչպես յերկու պետությունների անմիջական շահերի տեսակետից, այնպես և ընդհանուր խաղաղությունն ամրացնելու շահերի տեսակետից: Այդ առավել ևս պետք է մատնանշել քանի վոր Վաշինգտոնում տեղի ունեցող բանակցությունների նշանակությունը շատ ավելի հեռու յեգում յերկու պետությունների միջև յեղած փոխարարելությունների սահմաններից:

Սակայն խորհրդային իշխանության խաղաղության քաղաքականության կենսագործումը միայն մեղանից չի կախված: Խաղմական հարձակումների վտանգը հենց այժմ հատկապես ակտուալ է դարձել, և մենք պետք ենատուկ ուշադրություն նվիրենք իմպերիալիստների: խաղաղության գործի համար վտանգավոր մտադրություններւն ու պլաններին:

Այս կապակցությամբ հասկանալի յե, վոր գրությունը Հեռավոր Արևելքում և Ճապոնիայի հետ ունեցած փոխարարելությունների հարցը այնպիսի հարցեր են յեղել և այժմ ել են, վորոնք զրավում են մեր յերկրի աշխատավորության բացառիկ ուշադրությունը: Մեր քաղաքականությունը Հեռավոր

քում, մեր փոխարարելությունները հեռավորարեավելյան մեր հարեանների հետ՝ անշեղորեն բղխում են ընդհանուր խաղաղությունը պահպանելու շահերից: Դրա համար վորպես ապացույց և ծառայում վոչ միայն մեր առաջարկը ճապոնիային՝ միմյանց վրա հարձակվելու պայմանագիր կնքելու մասին, այլև մեր առաջարկը՝ Զինարկելյան յերկաթուղին վաճառելու մասին: Մենք այժմ ել չենք փոխում մեր այդ քաղաքականությունը: Մենք պնդում ենք, վոր մեր նախկին հայտարարությունները պահպանում են իրենց լիակատար ուժը: Սակայն մենք պետք ենաշվի առնենք Մանջուրիայում տեղի ունեցող միջադեպերն ու նախ և առաջ այն փաստը, վոր մեր կողմից կնքված պայմանագրերն ու ճապոնիայի կողմից մեզ տրված խոստումները գործնականում խախտվում են, այնպիսի քաղաքականություն և վարվում, վորը վիճեցնում և այդ պայմանագրերը: Թշնամական հարաբերությունները դեպի ԽՍՀՄ, պրովոկացիաները նրա հանգեց այնտեղ զնալով ուժեղանում են: Դրա համար ել մենք մեր ակտուալ խնդիրն ենք համարում մերկացնել այդ ուղղությամբ կատարվող բոլոր պրովոկացիոն փորձերը, դրա հետ միասին մենք մեր առաջնակարգ պարտականությունն ենք համարում լիովին պաշտպանել Խորհրդային Միության շահերը, մինչև պաշտպանել Խորհրդային Միության սահմանները: Յերբ մենք որպեսի վրա կարդում ենք ճապոնական ու մանջուրական մամուլի հաղորդարգու-

թյունները ճապրնական վորոշ ականավոր գործիչների ծիծաղելի պլանների մասին՝ Սիրիրը հափշտակելու վերաբերյալ, ծովափնյա շրջանը ներխուժելու վերաբերյալ, և յերբ այդ պլաններն ու դատողություններն ավելի ու ավելի բացահայտ և լսից են դառնում, մենք ստիպված ենք ուշիմ լինել, մանավանդ վոր Զինարկելյան յերկաթուղում ու սահմանամերձ շրջաններում տեղի ունեցող միջադեպերը վկայում են այն մասին, վոր պարոնայք ավանայուրիսաններն ավելի ու ավելի հակումն են ձեռք բերում խոսքերից ու հոգվածներից պրովոկացիոն գործողությունների ու յելույթների անցնելու։ Ըստ վորում մենք բացահայտ կերպով հայտարարում ենք այն, ինչ հայտնի յե ամբողջ աշխարհին—Մանջուրիայի անզոր կառավարությունը լուրջ մեծություն չի հանդիսանում այդ հարցերուն։ Բոլորին ել հայտնի յե, վոր այդ գործողությունների պատասխանատվությունն ամրողապես ընկնում է ճապրնական կառավարության վրա, վորպես Մանջուր-Գոյի խոկան տիբոց։

Մենք չենք կարող անոարեր վերաբերմունք ունենալ նաև ճապրնական վորոշ հեղինակավոր գործիչների այն արտահայտություններին կատամամբ, վորոնք ծագրում են յեվրոպացիների այն «հիմարությունը», թե՝ նախքան սպասերովմական գործողություններ սկսեն անհրաժեշտ և «պատերազմ հայտարարել»։ Ճապրնական այդ պարոնայք գործիչներն այլ տեսակետի վրա յեն կանգնած և բացահայտորին խոսում են ԽՍՀ

Միության վրա հանկարծակի հարձակում գործելու մասին և այն ել վորքան կարելի յե շուտ։

Այս ամենը մեզ ստիպում ե պատրաստ լինել լուրջ հարձակումների համար։ Մենք արդեն հարկ յեղածին պես հաշվի առել ենք այդ և այդ կազմակցությամբ հետեւալը պետք և ասենք. Յեթե մենք ներկայում մեր գլխավոր խնդիրն ենք համարում մեր կացնել խաղաղության դեմ ուղղված բոլոր տեսակի ավանդուրանները, հոգ տանել կարմիր բանակն ու մեր պաշտպանունակությունն ամրացնելու մասին, հետագայում ևս անշեղորին խաղաղության քաղաքականություն վարել—մեր հարեանների հետ նորմալ հարաբերություններն ամրացնելու գծով, —ապա ԽՍՀ Միության վրա հարձակվելու դեպքում մենք միայն մեկ բանի մեջ կտեսնենք մեր խնդիրը, այն և հակառակորդի լիակատաք ջախջախումը, մեր կարմիր բանակի հաղթանակը (բայց ն ճափահարություններ)։

Մենք հատուկ ուշազբությամբ հետեւում ենք Հեռավոր Արևելքում տեղի ունեցող դեպքերին։ Մենք հավատացած ենք, վոր ԽՍՀ Միության ընդհանուր ամրացման հետ միասին ամել ու ամրացել և մեր կարմիր բանակը։ Մենք հավատացած ենք, վոր մեզ վրա հարձակվող կողմը շուտով կհասկանա, թե ինչ և նշանակում գործ ունենալ անպարաելի կարմիր բանակի հետ (բայց ն ճափահարություններ)։

\* \* \*

Մեր յերկրի անտեսական աձման հետ միասին

աճում են մասսաների կուլտուրական և այլ պահանջները: Այդ պահանջներն աճում են բոլոր ուղղություններով: Աճում են զրգերի և թերթերի պահանջները, աճում են այնպիսի չափով, վոր մենք հաղիկ ենք կարողանում հասնել նրանց հետեւց: Կուլտուրական կյանքի ձգտումն ավելանում ե մեր ուժեղ պահանջների հետ—կուլտուրապես աշխատել կուլտուրապես կառուցել: Ավելանում ե լայն սպառման ապրանքների պահանջն ու պահանջկոտությունը: Սպառողը պահանջում ե վոչ միայն շատ ապրանք, այլ անել են նաև լայն սպառման ապրանքների ընարությանն առաջարկող պահանջները: Զափազանց ուժեղացել ե նաև ավելի լավ բնակարանների ու կենցաղային ավելի լավ հարմարությունների պահանջը: Մենք ավելի հաճախ ենք հանդիպում այնպիսի յերեսությների, յերբ աշխատավորը չի ցանկանում հաշտվել բնակարանային շինարարության հին ստանդարտների հետ, պահանջնով ավելի լավ վորակի բնակելի շենքեր: Ուժեղացել ե պահանջը քաղաքների ու գյուղերի սանիտարական սպասարկման նկատմամբ: Հասարակական սննդի ասպարեզում արդեն ձեռք քերված թափի, սննդի խոշոր արդյունաբերության աճման պայմաններում, սանիտարական գործի բարելավումը խոշոր նշանակություն ե ստանում: Կարիք չկա խոսելու այն մասին, թե ներկայումս վորքան և աճում լավ ճանապարհներ ունենալու պահանջը և թե մենք դեռ վորքան հետ ենք

միում այդ պահանջը բավարարելու ասպարեզում: Բահավորների ու գյուղացիների կողմից առաջարկվող գեռ վորքան այլ նույնպես չափազանց կարենո՞ւ պահանջներ կան, վորոնց բավարարումն ավելի ու ավելի անհետաձգելի յե դառնում:

Այս ամենը պահանջում են ամեն կերպ ծավալել մեր պետական ու անդական արդյունաբերությունը, ավելի լավ ոգտագործել հումքի տեղական տեսակները, ուժեղ թափով վեր հանել հողագործության ու անսանապահության բոլոր ճյուղերը: Այս ամենը հատկապես պահանջում են կազմակերպական հսկայական աշխատանք կատարել բանվոր դասակարգի ու գյուղացիության լայն մասսաների մեջ, բարեկավել զեկավարման մեթոդները, առաջ քաշել բազմաթիվ նոր գեկավար կալրեր, սոցիալիզմի հաղթանակի համար պայքարող մարտիկներ:

Որ որի վրա աճում ե մեր յերկրի տնտեսական ու կուլտուրական շինարարության թափը: Արդյունաբերության, գյուղատնտեսության, գիտության, տեխնիկայի ու արվեստի բնագավառում և այլ մասնակիցներում հաջողություններ ե ձեռք բերում: Ստեղծագործական աշխատանքը մեր յերկրում վերելք ե ապրում բոլոր բնագավառներում: Աճում ե նորանոր գժվարին ինպիրները հաջողությամբ հաղթահարող անձնվեր ու ձեռներեց մարդկանց թիվը: Վերցրեք ողբեկան կառուցությունը: Ինչպիսի հայտնի յե, սարատոսիքան

Նվաճելու համաշխարհային ռեկորդը ներկայում պահպահում է «СССР» սրբազնատափակին:

Ծավալվում ե ուժին պայքարը՝ տեխնիկային տիեզրագետելու համար։ Կարակումի նշանավոր ավտովազքը այդ գործում մեր ձեռք բերած հաջողությունների լավագույն ապացույցներից մեկն ե հանդիսանում։ Վերջին տարիներու ուժգին պայքար ե մզգում Արկտիկայում, նրա՝ մարդկությանը գեռես անհայտ գժվարությունների գենե։ Մենք աեստում ենք, թե ինչպես մեր սառցահատների արշավանքները Հյուսիսային Բևեռային ծովում (Սառուցյալ ովկիանոս) նոր ճանապարհներ են բաց անում, ծնում են մեր յերկրի նոր հերթանիք։

Սպիտակ և Բալթիկ ծովերը միացնող՝ ընկ. Սառ-  
լինի անվան ջրանցքի կառուցումն ինչ-վոր մի 20  
ամսվա ընթացքում՝ ևս մի որինակ և հանգիսանում  
մեր շինարարության թափի, նրա մեծ հանարավորու-  
թյունների: Մինչեւ մենք արդեն ձեռնարկել ենք  
և ավելի հզոր՝ Մուկվա գետը Վոլգայի հետ միաց-  
նող՝ ջբանցքի՝ կառուցմանը: Բայց չե՛ վոր այս ամենը  
միայն առանձին որինակներ են այն մեծագույն շի-  
նարարություննեց, վորը կատարվում է մեր յերկրի  
կենտրոնում ու ծայրամասերում, յերկրի, վորն ան-  
շեղորեն աճում և շինարար աշխատանքի ներզագի-  
լով աշխատավորության նորանոր մասսաների:

Հոկտեմբերյան հեղափոխության 16-րդ տարեկարգինը մինչք առնում ենք վարպետ ԽՍՀ Միության բան-

վոր զասակարգի ու աշխատավորության մեծագույն հաջողությունների տարեգարձ: Հոկտեմբերյան հեղափոխության տարեգարձին ձեռք բերված հաջողությունների մեջ մենք տեսնում ենք վոչ միայն ԽՍՀ Միության, այլև ամբողջ բանվոր զասակարգի ձեռք բերած հաջողությունները: Այդ հաջողություններով իրավունք ունեն պարծենալու բոլոր յերկրների պրոցեսարները, ամբողջ աշխարհի հարստահաճարվածները:

Մեր այդ հաջողությունների համար մենք պարտական ենք այս բանին, զոր ԽՍՀՄ-ում կա բոլցիկյան պանծալի կուսակցություն, վորը զեկավարում և այդ վորջ շնալ արությունը, վոր մենք ունենք լենինյան շատր-բոլցիկյան կենտրոնական Կոմիտե, վոր մեր գործի գլուխ կանգնած և փորձված առաջնորդ ընկ. Անալինը (բուռն ծափանարարյուններ, վարոնիկ փախում են ովացիայի):

Կեզզե՝ Հոկտեմբերյան նեղափախությունը:

Կեցցե՞ համաշխարհային Հոկտեմբերը (քուն ծափահարություններ, Խճերնացիոնալ):



Խմբագիր Տ. Խորենի  
Մրագրի Լ. Արդվան

Հանձնված և տրամադրության 19 մոյեմբերի 1988 թ.  
Սուրագրված և սպազմելու 25 մոյեմբերի 1988 թ.  
Գլավին 7786 (թ). Հրատ. № 149.  
Պատվեր № 66 Ցիքած 5.000 55.000 ապ. 60.  
Կուտերտակի սպառած. Թերեփան.

ՀՀ Ազգային գրադարան



NL0397154

ԳԻՒԾ 25 ԿՈՊ

556



16-ա ԳՈДՈՎԾԻՆԱ ՕԿՏԱՅՐԾԿՈՅ  
РЕВОЛЮЦИИ

Доклад тов. Молотова на торжественном  
пленуме Московского совета  
6-го ноября

---

Партиздат 1933 Эривань